ԳԻՏԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր
ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԿԻԲԵՐՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍԿԱՑԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Հոդվածում դիտարկված են կիբերտարածքի հատկանիշները և նրանց առանձնահատկությունները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կիբերտարածք, համացանց, վիրտուալ իրականություն, հիպերտեքստուալություն, գլոբալություն, խճանկարայնություն, կրեատիվություն և անանություն:

Կիբերտարածք եզրույթը /անգլ. «cyberspace»/ շրջանառության մեջ է դրվել կանադացի գրող-ֆանտաստ Գիբսոնի կողմից, որն իր “Հռոմի հրդեհումը” նորավեպում /1982թ./ միավորել է կիբերնետիկա և տարածք եզրույթները: Հաճախ գրականության մեջ կիբերտարածքը նույնացվում է վիրտուալ /երևութական/ իրականության և համացանցի /Ինտերնետի/ հետ, թեև այդ եզրույթների միջև գոյություն ունեն որոշ տարբերություններ:

Համացանց հասկացությունը բազմաչափ է: Նրա բաղադրիչներն են. կիբերտարածքը, վիրտուալությունը, հիպերտեքստուալությունը, գլոբալությունը, խճանկարայնությունը և անանունությունը: Վիրտուալությունը սերում է լատիներեն «virtus» բառից, ակտիվորեն սկսել է գործածվել դեռևս անցյալ դարի կեսերին և նշանակել է երևույթների մեջ քողարկված ինչ-որ խորհրդավոր ուժ կամ իրերի գոյության ինչ-որ երկրորդային եղանակ: Այդ իմաստները կարելի է հայտնաբերել Թ.Ավքինացու, Ֆր.Բեկոնի, Ջ.Բ.Վիկոյի, Գ.Հեգելի և ուրիշների աշխատություններում:

Վիրտուալ եզրույթը գործածվում է երկու հիմնական իմաստներով: Առաջինը սկիզբ է առնում ավանդական բնագիտությունից՝ վիրտուալ եզրույթի իմաստը բացահայտվում է իրականության կայուն տարածական-ժամանակային բնութագրերի և օբյեկտների անսահման փոքր տեղափոխությունների կամ մասնիկների գոյության վաղանցիկության միջև հակադրության միջոցով: Մասնավորապես, վիրտուալության եզրույթը կիրառվում է քվանտային ֆիզիկայում՝ այսպես կոչված, վիրտուալ մասնիկների բնութագրման նպատակով: Ռուս հետազոտող Ս.Վ.Իլարիոնովը նշում է, որ ռադիոտեխնիկայում գոյության ունեն վիրտուալ օբյեկտներ:[1]

Երկրորդ իմաստը ծնունդ է առել համակարգչային սիմուլյացիաների պրակտիկայից՝ համակարգչային գրաֆիկայի միջոցներով ստեղծված պատրանքային-երևութական օբյեկտների և իրական նյութական օբյեկտների հակադրության վերլուծության շնորհիվ:

Երկու իմաստներն էլ միավորված են ավելի ընդհանուր՝ “վիրտուալ իրականություն” հասկացության մեջ: Վիրտուալ իրականությունը ներառում է իր մեջ նաև երազատեսությունը, զգայախաբեական-ցնորական վիճակները, առասպելները, հեքիաթները, լուսանկարը, հայելանման

1 Илларионов С. В. Методологические и философские проблемы современной физики. Философские науки, 1980. № 2.- с. 23-41.

արտացոլումը, գրականությունը, կինոն, հեռուստատեսությունը, հեռախոսը, համակարգիչը և այլն: Հեգելը հանճարեղ կռահումներ ունի վիրտուալ իրականության մասին: Երևութաբանությունը /ֆենոմենոլոգիան/՝ փիլիսոփայական կատեգորիա է, որը մուծվել է Հեգելի կողմից բացարձակը՝ հարաբերականի, անվերջը՝ վերջավորի, էությունը՝ երևույթի միջոցով դրսևորվելու փաստը հանգամանորեն պարզաբանելիս: Իր «Գիտության տրամաբանության» մեջ Հեգելը երևութականության կատեգորիան մերձեցրել է հակադրությունների փոխարտացոլում հասկացությանը՝ վերածելով այն վերջինիս նմանակներից մեկը: Ըստ Հեգելի, երևութականությունն ունի օբյեկտիվ բնույթ և հակադրված է սուբյեկտիվ թվացողությանը: Երևութականությունն ունի նաև բացասական և դրական կողմեր, ընդսմին դրանք երկուսն էլ ունեն իրենց հիմնական կեցությունը. «երևութականությունը, – նկատել է հանճարեղ Հեգելը, – դա որոշակիությունն է, որի միջոցով լուսարկվում է մեկ այլ որոշակիությունը՝ բնօրինակը»:[1]

Վիրտուալ իրականության ձևերից է «համակարգչային վիրտուալ իրականությունը», որը վերացական իմաստով, կարծեցյալ, թվացյալ աշխարհն է: Այն աշխարհն է, որը ստեղծվել է օգտագործողի երևակայության մեջ:[2] Շեշտը դրվում է «օգտագործող» բառի, կամ, որ նույնն է՝ սուբյեկտի վրա, քանի որ հենց նրա գլխում է ստեղծվում այդ երևակայական, թվացյալ աշխարհը:

Համակարգչային վիրտուալ իրականությունը բովանդակում է իր մեջ վիրտուալ իրականության բազմաթիվ ձևեր: Դրանցից մեկն էլ հենց կիբերտարածքն է: Միայն վիրտուալության հատկանիշը բավարար չէ կիբերտարածքի կայացման համար: Կիբերտարածքը՝ վիրտուալության, հիպերտեքստուալության, գլոբալության, խճանկարայնության, կրեատիվության և անանունության հատկանիշների ամբողջական միագումարն է: Անցնենք հիպերտեքստուալության, կամ, որ նույնն է, հիպերտեքստի երևույթի պարզաբանումից:

Ժամանակին էլեկտրոնային քաղաքակրթության առաջին տեսաբան հանրահռչակ Մարշալ Մաքլուհենը կանխատեսել է «Գուտենբերգի գալակտիկայի” կործանումը և հետտպագրական մշակույթի երևան գալը՝ հեռուստաէլեկտրոնային տեսատեխնիկայի հիման վրա:[3] Նրա կարծիքով, աստիճանաբար գրքերի ընթերցանությունը կորցնելու է իր իմաստը, քանի որ նրան փոխարինելու են գալու տեղեկությունների այլ աղբյուրները: Դրանք կառուցվելու են հեռուստատեսային և համակարգչային նոր տեխնոլոգիաների հիման վրա: Դրանք ընդլայնելու և ուժեղացնելու են մարդու ոչ միայն առանձին զգայական-ընկալական օրգանների, այլ ամբողջ նյարդային համակարգի արդյունավետությունը: Արդեն այսօր տեսնում ենք, թե ինչպես հեռուստատեսությունը վերաինտեգրում է մարդու զգացմունքները. մենք հստակորեն տեսնում ենք իրական բնապատկերները, լսում թռչունների դայլայլը, այլ ոչ թե միայն դրանք մտովի պատկերացնում: Այդ ամենն իրականացվում է գծապատկերային տեսողական նշանների միջոցով: Մարդը աստիճանաբար դառնում է կարևոր իրադարձությունների մասնակիցը՝տեղեկատվություն ստանալու պահին:

Ժամանակակից տեղեկատվական բառարաններում հիպերտեքստը մեկնաբանվում է որպես տեղեկատվական զանգված, որի մեջ տրված և ինքնաբերաբար պահպանվում են ընդգծված տարրերի, հասկացությունների, եզրույթների և բաժինների միջև ասոցիատիվ և իմաստային կապերը: Հետևաբար, հիպերտեքստը՝ հաղորդակցության նոր, ուրույն եղանակ

1 Гегель, Г. Работы разных лет: в 2 т. - Т. 2. - М., 1970. - с.136-137.

2 Меньчиков Г.П. Виртуальная реальность: понятие, новации, применение. Философские науки, 1998, № 3, с. 170.

3 McLuhan, M. The Gutenberg Galaxy. - N.Y., 1962. - 27 p.

է:[1]

Հիպերտեքստ է ցանկացած տեքստը, որը հղումներ է անում ուրիշ այլ տեքստերին: Հիպերտեքստ կարելի է համարել հանրագիտարանը կամ տեղեկատուն, գիրքը, որը միշտ չէ որ պահպանվում է թվային տեսքով:

Հիպերտեքստը մտնում է համացանց՝ որպես նոր տվյալների ստեղծման, պահպանման և փոխանցման հանրամատչելի միջոց: Ինքը համացանցը վերածվել է տեքստերի, բանկային տվյալների, հղումների և այլնի բաց համակարգի:

Քանի որ այսօր տեղեկատվության արտադրությունը մեծապես կարևորվում է, ապա տեքստը՝ որպես այդպիսի արտադրության ելակետային նյութ և արդյունք, ձեռք է բերել փոխանակման համընդհանրական միջոցի կարգավիճակ: Դրա շնորհիվ հաղորդակցությունների ցանցը մշտապես զարգանում է՝ տեքստերն իրար հետ միահյուսվելով կյանքի է կոչում նորանոր տեքստեր: Հայտնի մշակութաբան Յու.Մ.Լոտմանը՝ "Տեքստը որպես նշանագիտական պրոբլեմ" հոդվածում նշում է, որ տեքստը ոչ միայն փոխանցում է իր մեջ ամփոփված տեղեկությունն, այլ նաև փոխակերպում է հաղորդագրությունը և մշակում նորանոր հաղորդագրություններ, կամ, որ նույնն է, նոր տեքստեր:[2]

Համացանցի հիպերտեքստուալությունը նպաստում է ողջ մարդկության համար ընդհանուր անսահմանափակ հիշողության ձևավորմանը, որը հաղորդակցության գլոբալացման հիմք է: Ցանցի այդ հատկանիշը թույլ է տալիս հաղթահարել հաղորդակցական փոխգործակցության նախորդ ձևերի էական սահմանափակումները /կարճատևությունը, դանդաղ տարածումը, մատչելիության սահմանափակությունը/:[3]

Համացանցում հիպերտեքստի գործնական մարմնավորման վառ օրինակներից է էլեկտրոնային գրադարանը: Այստեղ, ընթերցելով ընտրված գիրքը, կարելի է ցանկացած պահին միանգամից արագ տեղափոխվել բառարանի մեջ՝ պարզելու համար անհասկանալի բառերի իմաստը: Եթե աշխարհի էլեկտրոնային գրադարաններում պահվող խորհրդանշական շտեմարանը ներկայացնենք որպես գիտելիքների հաշվարկված կապիտալի մի ձև, ապա դրանց պաշարները, ի տարբերություն նավթի ու գազի պաշարների, զանգվածային օգտագործումից բնավ չեն նվազում, այլ ընդհակառակը, բազմապատկվում և ընդլայնվում են: Էլեկտրոնային հաղորդակցումների գործածումը արմատապես վերափոխում է կրթության համակարգը, հետզհետե ավելի մեծ թվով մարդիկ են օգտվում հեռատարածական /դիստանցիոն/ ուսուցումից, ակտիվորեն հաստատվում է մասնագիտական որակավորման շարունակական բարձրացման սկզբունքը: Մասնագետների պատրաստման բարելավումը անձնակազմի ղեկավարման մեթոդների նորացման լայն հորիզոններ է բացում ընկերությունների ու հաստատությունների առջև, հետևաբար նաև արտադրության աճի հնարավորություններ ստեղծում: Միաժամանակ յուրաքանչյուր աշխատակցի համար ստեղծվում է ավելի հաջողակ ու դինամիկ կարիերայի հնարավորություն և աշխատելու ավելի մեծ շահախնդրություն:

Տեղեկատվական հասարակության մեջ ավելի ու ավելի վճռորոշ դեր են խաղում գիտելիքի ու տեղեկատվության ձեռքբերումը, մշակումը, պահպանումը, փոխանցումը, տարածումն ու օգտագործումը, այդ թվում՝ յուրահատուկ փոխգործողությունների /interactions/ միջոցով:

«Ինտերակտիվություն» եզրույթը սերում է անգլերեն «interaction» /փոխգործողություն, փոխազդեցություն/ բառից: Խորագիտակ և բանիմաց մասնագետի ձեռքում Ինտերնետ-ինտերակտիվությու-

1 Очерки истории информатики в России /под ред. Д.А.Поспелова, Я.И.Фета. - Новосибирск, 1998. - с.150.

2 Лотман Ю.М. Избранные статьи. Т.1. – Таллин, 1992, с.131.

3 Купер И.Р. Гипертекст как способ коммуникации. — М., 1999, 383 с.

նը կարող է լուծել խնդիրներ, որոնք անհնարին էին տպագիր խոսքի մեջ: Օրինակ, գիտական գիրքը չի կարող միաժամանակ լինել ակադեմիկոսի, ուսանողի, դպրոցականի և "տնային տնտեսուհու" համար: Նրա շարադրման մակարդակը որոշվում է նախապես: Ինտերակտիվությունը թույլ է տալիս նվազ կրթված ընթերցողին՝ պարզաբանումների համար օգտվել առանձին էջերից: . Համացանցում բազմաթիվ կազմակերպություններ իրենց գործունեությունը կառուցում են հետադարձ կապի սկզբունքների վրա, որոնք թույլ են տալիս աշխատանքը կառուցել ավելի արդյունավետորեն: Արժի հիշատակել նաև ինտերակտիվ վիրտուալ Ինտերնետ-խանութների մասին, որտեղ, ինչպես վաճառասեղանների վրա, դասավորված են ապրանքները, որոնք ձեռք են բերվում՝ հարկավոր ապրանքը նախապես վիրտուալ զամբյուղի մեջ գցելով: Համաժողովները, բլոգները և մեկնաբանությունները՝ ևս ցանցի ինտերակտիվության ռեալ դրսևորումներ են:

Հեռուստադիտողներին հնարավորություն ընձեռելով ոչ միայն նայելու հեռուստաէկրանին, այլև ինչ-որ կերպ օգտագործելու պատկերը, ինտերակտիվությունը կարող է էականորեն ազդել քաղաքական ընտրարշավների և թեկնածուների ընտրության գործընթացների վրա: Ընդսմին ՋԼՄ-ների հնարավորություններն անհամեմատ շատ ավելին են՝ դրանք չեն սահմանափակվում զուտ ընտրության գործընթացով: Եթե թեկնածուն ընտրվի, արդյոք կծավալի՞ աշխատանք շրջակա միջավայրի բարելավման ուղղությամբ, և եթե այո, ապա ի՞նչ չափով: Ինչպե՞ս թեկնածուն իրեն կպահի պատանդների ձգնաժամի, ռասայական անկարգությունների կամ ինչ-որ վիթխարի աղետների ժամանակ՝ ամենատարբեր հանգամանքներում: Փոխանակ պատգամավորության թեկնածուի դատողությունների բնույթն ու արժանիքները գնահատելու՝ լսելով 30 վայրկյանանոց գովազդային հաղորդումներ, ապագայի տեսահամակարգերից՝ ինտերակտիվ եղանակով օգտվողները կարող են միացնել որևէ հեռուստաալիք կամ գործարկել համակարգչային սկավառակ և մանրամասնորեն ծանոթանալ, թե ինչպես է այդ թեկնածուն հարցերը քննարկում և ինչպես է որոշումներ ընդունում զանազան իրավիճակներում, որ նրան առաջարկում են հենց իրենք՝ ընտրողները: Ծրագրային հիմնադրույթները կարող են շարադրվել ամենայն մանրամասնությամբ, որպեսզի նրանք, ովքեր պետք է ընտրեն, կարողանան ազդել դրանց հիմքում ընկած բյուջետային առաջարկությունների վրա և հարցնել. «Իսկ ի՞նչ կլինի, եթե...»: Եթե որևէ հայտնի քաղաքական շոուին մասնակցեն բազմաթիվ մարդիկ, ընդ որում համակարգիչը գրանցելու է նրանց պատասխանները ու հաշվելու միավորները, ապա այդօրինակ տեխնոլոգիան կարելի է հարմարեցնել հասարակական կարծիքի հարցման քաղաքական պահանջներին: Միայն ինտերակտիվության պայմաններում՝ հենվելով հավաստի տեղեկատվության վրա, հնարավոր է ընդունել ճիշտ ու կշռադատված քաղաքական որոշումներ:

Այսպիսով, ինտերակտիվությունը սկզբունքորեն նպաստում է ժողովրդավարական գործընթացների կատարելագործմանը, մարդկանց քաղաքական և գործարար ակտիվության մեծացմանը, բարեխիղճ մրցակցության զարգացմանը, սպառողի իրավունքների արդյունավետ պաշտպանությանը:

Կրեատիվություն եզրույթը սերում է լատիներեն «creation» – "արարում" բառից, որը նշանակում է անհատի ստեղծագործական ունակություններ: Համացանցն ունի կրեատիվության, ստեղծարար ակտիվության վիթխարի ներուժ, կամ, որ նույնն է, ինքնարտահայտման անսահման հնարավորություններ: Համացանցից յուրաքանչյուր օգտվող՝ իր ինտերնետ-էջի կամ կայքի միջոցով, ինչ-որ իմաստով, ստեղծում, արարում է աշխարհը,

նրա համապատկերը:[1] Դա նշանակում է, որ համացանցի յուրաքանչյուր մասնակից համաշխարհային սարդոստայնի մեջ ստեղծում է տեքստերի իր հատվածը, դրանք ձևավորելով լայն լսարանի հետ հաղորդակցվելու սեփական ոճով: Դա անշուշտ վկայում է հասարակական կյանքում սուբյեկտիվ գործոնի դերի անկասելի աճի մասին: Որոշ հոգեբաններ վիրտուալությունը բնութագրում են որպես աշխարհի և մարդու կերպարների մտակառուցման շարունակական գործընթաց:[2] Վիրտուալ տարածքը, կամ, որ նույնն է, կիբերտարածքը արթնացնում և զարգացնում է մարդու ստեղծարար երևակայությունը:[3] Այդ պայմաններում արմատապես փոխվում է կրթության փիլիսոփայությունը: Եթե արդյունաբերական քաղաքակրթության դարաշրջանում կրթության իդեալը բազմագիտակ, բազմակողմանիորեն կրթված մարդն էր, ապա տեղեկատվական դարաշրջանում առաջին պլան է մղվում արարող մարդը, քանի որ տեղեկատվության ամբողջ զանգվածը մտապահվում է համակարգչի մեջ՝ ազատելով անհատի ստեղծագործական երևակայության էներգիան գերբեռնված հիշողության ծանր մամլիչի տակից:

Կրեատիվության աճին մեծապես նպաստում է և այն, որ ինֆորմատիկայի բնագավառում գիտատեխնիկական նվաճումների շնորհիվ մեծ տարածության վրա տեղեկատվության փոխանցման արժեքը կտրուկ նվազել է, իսկ հեռահաղորդակցական ծառայությունների մատուցման ծավալները սրընթաց աճում են: Այլ խոսքերով, ցանցում կրեատիվության հնարավորությունների աճին նպաստում է ընթերցողի համար տեքստերի մատչելիությունը, հրապարակումների էժանությունը, ներառյալ հիպերտեքստային հղումների և օգտագործման հնարավորությունները: Առանձնահատուկ արժի նշել լսարանի պոտենցիալ անսահմանափակության և հիպերտեքստի այն հատկության մասին, որ յուրաքանչյուր ընթերցողի "ստիպում" է դառնալ հեղինակ. Խնդիրն այն է, որ կայքի կառուցվածքը թույլ է տալիս, իսկ երբեմն՝ նույնիսկ դրդում օգտվողներին հանդես գալու սեփական մեկնաբանություններով՝ արտահայտելով իրենց մտքերը հրապարակված հոդվածի վերաբերյալ: Ինտերնետ ցանցի բաց կառուցվածքը, որը թույլ է տալիս օգտվողներին ստեղծելու նոր ծրագրեր, այդ թվում համատեղ ուժերով, ի վերջո, հանգեցնում է յուրօրինակ ցանցային եղբայրության, կամ, որ նույնն է, յուրօրինակ ուխտի, միության կազմավորմանը:

Համացանցի տարածման աշխարհագրությունն ընդգրկում է բոլոր երկրները: Գլոբալությունը՝ նշանակում է նաև տեղեկությունների մատչելիություն: Ողջ տեղեկատվական գործընթացը, որ իրականացվում է էլեկտրոնային տեսքով, գոյություն ունի բոլորի համար: "Համացանցը՝ առանձնահատուկ տեխնոլոգիական միջավայր է, որը թույլ է տալիս օգտագործել նախկինում գոյություն ունեցող բոլոր խորհրդանշական համակարգերը և ապահովել ցանկացած տեղեկատվության մատչելիությունը, որը կարելի է արձանագրել նրանց օգնությամբ: Համացանցը ձգտում է վերացնել ամեն մի յուրահատկություն: Այլ խոսքով, համացանցը գլոբալացնում է, հավակնում է ամեն ինչին և փորձում է միակցվել մարդկային ակտիվության բոլոր բնագավառներին":[4] Ընդ որում այստեղ "վերացվում", ջնջվում է ոչ այնքան այդ "յուրահատկությունը", որքան տեղեկությունների գաղտնիությունը: Խնդիրն այն է, որ ոչ մի հասարակություն ի վիճակի չէ ապրել տեղեկատվական լիակատար ազատության պայմաններում: Բանն այն է, որ հասա-

1 Батыгин Г.С. Социология Интернет: наука и образование в виртуальном пространстве. - М., 2002. - с.233.

2 Войскунский А.Е. Психологическая наука в исследовании. - СПб., 2000, с.110.

3 Хайм М. Метафизика виртуальной реальности. В сб.:Исследования по философии современного понимания мира. - М., 1995, с.155.

4 Кент П. Internet. - М., 1996. - с.196.

բական կյանքի կազմակերպման համար անհրաժեշտ է պահպանել որոշակի գաղտնիություն: Տեղեկատվության լիակատար ազատությունը կնշանակեր անձնական կյանքի ինքնավարության կորուստ: Համացանցի գլոբալությունը՝ նշանակում է, որ տեղեկատվական փոխանակումը չունի ո՛չ ժամանակատարածական, ո՛չ էլ քաղաքական սահմաններ: Այն, մի կողմից, նպաստում է մշակույթների փոխներթափանցմանը, իսկ մյուս կողմից՝ հնարավորություններ է ստեղծում յուրաքանչյուր հասարակության ինքնանույնականացման նոր ձևերի մշակման համար:

Խճանկարայնություն-խայտաբղետությունը՝ բնութագրում է համացանցի մեջ տեղի ունեցող գործընթացների հատվածայնությունը, կամ, որ նույնն է, ոչգծայնությունը: Վերջինս կարող է հասկանալի դառնալ ցանցի զարգացման ուղիների բազմատարբերակայնության /կամ այլընտրականության/ գաղափարի միջոցով: Ինտերնետ համակարգը զարգանում է ավելի շուտ քառասային, քան կարգավորված կերպով: Հետևաբար այդ բնագավառում ցանկացած կանխատեսումը չափազանց դժվար և բարդ գործ է:

Համաշխարհային սարդոստայնի մեջ միջանձնական հաղորդակցությունը ձեռք է բերում համընդհանրականացված բնույթ, ակսինքն իրականացվում է, հիմնականում, անդեմ եղանակներով: Ռեալ ժամանակի մեջ հաղորդակցությունը բնութագրվում է "վիրտուալության" բոլոր հատկանիշներով, քանի որ ոչինչ հայտնի չէ հաղորդակցության կոնկրետ մասնակիցների մասին ՝ նրանք ներկայացված են միայն իրենց կեղծանուններով /Nick/:

Հեռահաղորդակցության տեխնոլոգիաների առաջընթացն ավելորդ է դարձնում նաև մարդկանց միջև ոչ ֆորմալ զրույցների անհրաժեշտությունը: Միջանձնական շփումների նվազմանը համընթաց կորչում է փոխըմբռնման ոչ վերբալ եզրը, որը կազմում է մարդկանց միջև հաղորդակցության ողջ ծավալի մոտավորապես 70 %-ը: Արդյունքում նրանք մեկը մյուսից ավելի ու ավելի մեկուսանում-օտարվում են:[1]

Այս ամենից բխում են հետևյալ եզրակացությունները: Նախ, կիբերտարածքի՝որպես երևութական /վիրտուալ/ իրականության ձևերից մեկի առաջացումը սերտորեն կապված է Համաշխարհային ցանցի էության հետ: Ավելի ստույգ, այն՝ վիրտուալության /երևութականության/, հիպերտեքստուալության, գլոբալության, կրեատիվության, խճանկարայնության և անանունության հատկանիշների հանրագումարային արդյունքն է: Երկրորդ, կիբերտարածքը՝ դա փոխաբերություններով հարուստ յուրօրինակ վերացություն է, որը կիրառվում է համակարգչային ցանցում լայնորեն տարածված օբյեկտների վարքի նկարագրման նպատակով: Օրինակ, վեբ-կայքը կարող է փոխաբերականորեն նկարագրվել որպես կիբերտարածքում գտնվող, իսկ ցանցային հաղորդակցությունը՝ որպես կիբերտարածքում գտնվող երևույթ:[2] Եվ, վերջապես, փիլիսոփայական իմաստով կիբերտարածքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդու կեցության երևութական /վիրտուալ/ սոցիալական դաշտ, որն իրեն հայտնաբերում է համակարգչի, ցանցի և մարդու փոխգործակցության շրջանակներում: Կիբերտարածքը ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ փոխգործողությունների միագումարը:[3] Վերջապես, "համացանց" և "կիբերտարածք" եզրույթները ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև տարբեր դիտանկյուններից բնութագրում և ներկայացնում են դեպի ապագա տեղեկատվական քաղաքակրթություն տանող ուղու ռազմավարական բնույթը: Նոր քա-

1 Тарасенко В.В. Человек кликающий: фрактальные метаморфозы. Информационное общество, 1999, № 1, с.43-46.

2 Войскунский А.Е. Метафоры Интернета. Вопросы философии, 2001, № 2, с.64-79.

3 Иванов Д;В. Общество как виртуальная реальность: информационное общество. - М., 2004, с.125-130.

ղաքակրթությունն օժտված է իր առանձնահատուկ աշխարհայացքով, ժամանակի, տարածության, տրամաբանության հետ հարաբերության իր միջոցներով և պատճառհետևանքային կապերով, ինչպես նաև ապագան կառուցելու սեփական սկզբունքներով: Մարդկությունը կանգնած է դեպի առաջ վիթխարի թռիչքի շեմին:

КИБЕРПРОСТРАНСТВО И ЕГО ПОНЯТИЙНЫЕ СОСТАВЛЯЮЩИЕ

МАНУК АРУТЮНЯН

доктор философских наук

ШУШАНИК СААКЯН

соискатель Института философии, социологии и права НАН РА

В статье рассмотрены проблемы глобальной информационной компьютерной сети Интернет и киберпространства. Основная направленность исследования – выявление сложной и противоречивой сущности влияния сети Интернет на процессы трансформации современных обществ.

CYBERSPACE AND ITS CONCEPTUAL COMPONENTS

MANUK HARUTYUNYAN

Doctor of Philosophy

SHUSHANIK SAHAKYAN

PhD Student at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

The article considers the problems of the Internet as a global information network and cyberspace. The main focus of the study is the disclosure of the complex and contradictory nature of the impact of the Internet on transformation processes of modern societies.